ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ФАКУЛЬТЕТ АРМЯНСКОЙ ФИЛОЛОГИИ

YEREVAN STATE UNIVERSITY

FACULTY OF ARMENIAN PHILOLOGY

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Երևան Աբովյան 52ա Республика Армения, Ереван, 0025, Абовяна 52а 52a Abovyan, 0025, Yerevan, Republic of Armenia
(+374 10) 54-43-91/94,95,96/1-37, armphilology@ysu.am, www.ysu.am

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6
ԵՊՀ ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝
2026 Թ. ՄԱՅԻՍԻ 13-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Օրակարգում՝

1. Մանկավարժական և մասնագիտական պրակտիկաների (առկա/հեռակա) արդյունքների ամփոփում:
2. Առկա ուսուցման 2025-26 ուստարվա բակալավրիատի ավարտական աշխատանքների նախապաշտպանությունների արդյունքների ամփոփում:
3. Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի պրոֆեսորի թափուր պաշտոնի տեղակալման ընտրություն:
4. Ընթացիկ հարցեր:

Օրակարգի 1-ի հարցի վերաբերյալ տեղեկացվեց, որ մանկավարժական պրակտիկան վերաբերում է հայ բանասիրության ֆակուլտետի 3-րդ և 4-դ կուրսերի ուսանողներին. դպրոցներում պրակտիկան ընթացել է նորմալ հունով, ԵՊՀ ընդունված կարգին համապատասխան: Ուսանողներին կցված ղեկավարները ամենօրյա գրաֆիկով եղել են դպրոցներում, հետևել դասապրոցեսին, համապատասխան նշումներ արել պրակտիկայի գրանցամատյաններում: Պրակտիկայի ընթացքը գնահատվում է նորմալ:

Օրակարգի 2-րդ հարցի մասին նշվեց, որ բոլոր ամբիոններում պարբերաբար կազմակերպվել են ավարտական աշխատանքների կատարման ընթացքի վերաբերյալ հաշվետվություններ, ինչի շնորհիվ էլ բոլոր ամբիոններում նախապաշտպանությունները ընթացել են նորմալ: Ուսանողները պարբերաբար հանդիպել են ղեկավարների հետ, աշխատանքները ավարտել են նախատեսված գրաֆիկով, խնդրահարույց դեպքեր չկան: Ամբիոնները գոհ են կատարված աշխատանքներից, և ավարտական աշխատանքների պաշտպանությունը կկազմակերպվի՝ ըստ ժամանակացույցի և ըստ կարգի:

Օրակարգի 3-րդ հարցի առթիվ.

ԼՍԵՑԻՆ – Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի պրոֆեսոր, բ. գ. դ. Աբերտ Արշավիրի Մակարյանի՝ ամբիոնի պրոֆեսորի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու երաշխավորության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - Պրոֆ. պրոֆ. Ս. Մուրադյանը, Յու. Ավետիսյանը, Ա. Աբաջյանը, դոց. դոց. Ն. Վարդանյանը, Ա. Ջրբաշյանը, Ա. Տեր-Մինասյանը և այլք։

Նշվեց, որ Ալբերտ Մակարյանը ԵՊՀ ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնում աշխատելու շուրջ 45 տարվա փորձ ունի, իսկ վերջին 5 տարիների ընթացքում եղել է նույն ամբիոնի վարիչը։ Իր աշխատանքային գործունեության ողջ ընթացքում Ա. Մակարյանը ծավալել է բեղուն գիտամանկավարժական գործունեություն, մասնակցել է տեղական և միջազգային գիտաժողովների, հեղինակ է մենագրությունների, դասագրքերի համահեղինակ է, հրատարակել է հոդվածներ բարձր վարկանիշ ունեցող գիտական պարբերականներում, մասնակցել է դրամաշնորհային ծրագրերի՝ իր հետազոտական աշխատանքներով նպաստելով հայ գրականագիտական մտքի զարգացմանը։ Ալ. Մակարյանը հարգված և ընդունելի գործընկեր է, սիրված պրոֆեսոր, որի հետագա գործունեությունը հատկապես նպաստելու է ամբիոնի զարգացմանը։ Նշվեց, որ ամբիոնը սիրով երաշխավորում է Ա. Մակարյանին մասնակցելու պրոֆեսորի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին։

Ելույթ ունեցան հայ գրականության պատմության ամբիոնի վարիչ, բ. գ .թ., դոց. Ն. Վարդանյանը, պրոֆ. Ս. Մուրադյանը, հայոց լեզվի ամբիոնի վարիչ, բ. գ. դ., պրոֆ. Յու. Ավետիսյանը, հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչ, բ. գ. դ., պրոֆ. Ա. Աբաջյանը, մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող Ալվարդ Կոշկա-կարյանը. ելույթ ունեցողները իրենց խոսքում նշեցին, որ Ալբերտ Մակարյանը բանիմաց, աշխատասեր մասնագետ է, սիրված է գործընկերների և ուսանողների կողմից և արժանի է պրոֆեսորի պաշտոնում աշխատելու։

Կազմակերպվեց փակ գաղտնի քվեարկություն, որին մասնակցեցին նիստին ներկա 27 անդամները և 23 կողմ ձայնով (4 քվեաթերթիկ ճանաչվեց անվավեր. դրանցում «կողմ» բառի մոտ նշումը սխալ էր դրված) Ալբերտ Արշավիրի Մակարյանին երաշխավորեցին աշխատելու պրոֆեսորի պաշտոնում։

ՈՐՈՇԵՑԻՆ. – Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի պրոֆեսոր Ալբերտ Արշավիրի Մակարյանին երաշխավորել մասնակցելու պրոֆեսորի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին։

Ընթացիկ հարցերում քննարկվեցին.

Ա) Ֆակուլտետի դեկան Ա. Գալստյանը տեղեկացրեց, որ տեղի է ունեցել հայ բանասիրության ֆակուլտետի ՈՒԳԸ գիտական նստաշրջանը, որի ընթացքում ուսանողները հանդես են եկել հաջողված գիտական հրապարակումներով։ Դեկանը շնորհակալություն հայտնեց ֆակուլտետի դասախոսներին և ՈՒԳԸ-ին նստաշրջանը բարձր մակարդակով կազմակերպելու համար։

Բ) Դեկան Ա. Գալստյանը գիտխորհրդին տեղեկացրեց նաև, որ ֆակուլտետի 3 դասա-խոսներ՝ հայոց լեզվի ամբիոնից բ. գ. թ., դոցենտներ Արևիկ Քամալյանն ու Կարինե

Միքայելյանը, հայ նորագույն գրականության ամբիոնի ասիստենտ, բ. գ. թ. Մարինե Ղազարյանը, շահել են ԵՊՀ կողմից հայտարարված ճանապարհորդական գործուղումային դրամաշնորհ և մեկնելու են արտերկիր՝ միջազգային գիտաժողովների մասնակցելու համար: Գիտխորհուրդը շնորհավորեց հաղթողներին՝ մաղթելով մասնագիտական նորանոր հաջողություններ:

ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԳԱԼՍՏՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ՄԵԼՔՈՆՅԱՆ